

Ֆիզիկական անձանց Հեռախոս-բանկ ծառայության տեղեկատվական ամփոփագիր

Ուժի մեջ է՝ 20.05.2020թ-ից
Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել:
Մանրամասների համար
Հեռ.՝ (374 10) 56 11 11
Էլ. հասցե՝ office@ameriabank.am
www.ameriabank.am

Բանկը վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից

1. Հեռախոս-բանկ ծառայությունը «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ «Բանկ») կողմից հեռախոսակապի միջոցով հեռահար սպասարկման համակարգ է:
2. Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է այցելել Բանկ և ստորագրել Հեռախոս-բանկ ծառայության հայտ-պայմանագիրը, որից հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկի կողմից հաղորդագրության միջոցով կուղարկվի Ամերիա Հեռախոս-բանկ ծառայության գաղտնաբառը Հաճախորդի կողմից նշած բջջային հեռախոսահամարին:
3. Հաճախորդը Հեռախոս-Բանկ ծառայությունից օգտվելու համար Բանկում պետք է ունենա առնվազն ՀՀ դրամով ընթացիկ հաշիվ: Ընդ որում, հաշվի բացման և ծառայության ակտիվացման համար հաճախորդը Բանկ է ներկայացնում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում հաշիվ բացելու, ավանդի, վճարային քարտի և պահատուփի համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները:¹ Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում տալ լրացուցիչ հարցեր: Հաճախորդի պատշաճ նույնականացման անհնարինության կամ հաշիվների սպասարկման անհնարինության դեպքում Բանկի կողմից մատուցվող ծառայության հասանելիությունը կարող է սահմանափակվել: Ինչպես նաև, Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն:
4. Հաճախորդի հայտի/հանձնարարականի հիման վրա Հեռախոս-բանկ ծառայություն միջոցով Բանկի կողմից մատուցվում են հետևյալ բանկային ծառայությունները՝

¹ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում (այսուհետ՝ Բանկ) հաշիվ բացելու, ավանդի, վճարային քարտի և պահատուփի համար անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ՝ https://ameriabank.am/userfiles/file/Account_openning_required_documents_2.pdf

- 4.1. ձայնային տեղեկատվության ստացում առկա հաշիվների, բանկային ծառայությունների վերաբերյալ Կոդների միջև կնքված պայմանագրերի և հասանելի ծառայությունների վերաբերյալ,
- 4.2. արտարժույթի առուվաճառքի գործարք կատարելու նպատակով գործարքի մեծության (ծավալի) և փոխարժեքի համաձայնեցում Բանկի հետ,
- 4.3. արտարժույթի անկանխիկ փոխարկում,
- 4.4. փոխանցում, ընդ որում՝ վճարման հանձնարարականը պետք է ներկայացվի օրենքով սահմանված վավերապայմանների պահպանմամբ, իսկ միջազգային փոխանցումը կատարվում է Հաճախորդի կողմից էլեկտրոնային եղանակով Բանկ ներկայացված՝ հանձնարարականի վավերապայմանների հիման վրա,
- 4.5. կոմունալ վճարումներ,
- 4.6. հավելյալ հաշվի բացում,
- 4.7. վճարային քարտի պատվիրում, վերաթողարկում,
- 4.8. ավանդի ներդրում, համալրում,
- 4.9. առանձին հաշվի փակում (բացառությամբ, եթե դա Բանկում հաճախորդի միակ հաշիվն է),
- 4.10. քարտի փակում,
- 4.11. ավանդի դադարեցում,
- 4.12. վարկի վաղաժամկետ մասնակի մարում,
- 4.13. Հաճախորդի՝ Բանկում ունեցած հաշվի և քարտի ընթացիկ սպասարկում, այդ թվում՝ հաշվի սառեցում, ապաստեցում, քարտի բլոկավորում, ապաբլոկավորում, գործարքի բողոքարկում, գործարքների սահմանաչափերի և սահմանափակումների փոփոխություն, VBV ծառայության ակտիվացում/ ապասկտիվացում, ինչպես նաև սպասարկման հետ կապված այլ գործողություններ,
- 4.14. Բանկին տրված հանձնարարականների չեղյալացում/վերացում,
- 4.15. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով Բանկին տրված հանձնարարականների փոփոխում,
- 4.16. Հաճախորդի՝ Բանկում գրանցված տվյալների (բացառությամբ հեռախոսահամարի) փոփոխության հանձնարարական,
- 4.17. Հաճախորդի համաձայնության ընդունում՝ իր ֆինանսավարկային պարտավորությունների վերաբերյալ «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ, ՀՀ ԿԲ վարկային ռեզիստրին, ինչպես նաև նման ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններին Բանկի կողմից հարցումներ կատարելու համար, ընդ որում Հաճախորդը իր համաձայնության հաստատումը պետք է Բանկ ներկայացնի նաև էլեկտրոնային եղանակով՝ Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված էլեկտրոնային փոստի կամ Ինտերնետ/ մոբայլ-բանկինգ համակարգերի միջոցով: Սույն կետի պահպանմամբ էլեկտրոնային եղանակներով տրամադրված Հաճախորդի գրավոր համաձայնությունն ունի այն նույն իրավական ուժը, ինչ ձեռագրով ստորագրված գրավոր համաձայնությունը:

Սույն կետում նշված բանկային ծառայությունների մատուցման համար Բանկը կարող է պահանջել ծառայության հետ կապված փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով փոխանակում Բանկի և Հաճախորդի միջև:

5. Հաճախորդը պատասխանատու է իր կողմից Հեռախոս-բանկ ծառայության գաղտնաբառի կիրառմամբ Բանկ ներկայացված հայտի/հանձնարարականի կատարման և դրա հետևանքով երրորդ անձանց պատճառված հնարավոր կորուստների և վնասների համար:
6. Հեռախոս-բանկ ծառայության գաղտնաբառը կարող է փոփոխվել Հաճախորդի՝ Բանկ ներկայացված գրավոր հայտի հիման վրա՝ Հաճախորդի կողմից նշված հեռախոսահամարին նոր հաղորդագրության ուղարկման միջոցով: Բացի այդ, գաղտնաբառը կարող է վերականգնվել հեռախոսակապով և/կամ այլ նույնականացվող եղանակով՝ Բանկի կողմից սահմանված նույնականացման կարգի համաձայն: Գաղտնաբառը համարվում է գաղտնի տեղեկատվություն ցանկացած երրորդ անձանց, այդ թվում՝ ընտանիքի անդամների և Բանկի աշխատակիցների համար:
7. Հաճախորդն իրավունք չունի հեռախոս-բանկ ծառայության գաղտնաբառը տրամադրել կամ հայտնի դարձնել ցանկացած երրորդ անձանց և պարտավոր է անհապաղ հայտնել Բանկին գաղտնաբառի՝ այլ անձանց հայտնի դառնալու և (կամ) կորստի մասին: Բանկը պատասխանատվություն չի կրում որևէ կորստի, վնասի համար, որն առաջացել է գաղտնաբառը Հաճախորդի կողմից հեռախոսակապի միջոցով Բանկին հայտնելու հիմքով Հաճախորդին ծառայություններ մատուցելու արդյունքում, անկախ նրանից, թե Բանկը տեղյակ է կորստի կամ վնասի հնարավորության մասին, թե՛ ոչ:
8. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով սպասարկվելու համար Հաճախորդը Բանկի հետ կապ է հաստատում Բանկի (+374 10) 56 11 11 հեռախոսահամարով:
9. Հեռախոս-բանկ ծառայությունից Հաճախորդները կարող են օգտվել նաև Ջանգի հավելվածի միջոցով:
 - 9.1. Ծառայությունից օգտվելու համար անհրաժեշտ է հեռախոսի մեջ ներբեռնել Ջանգի հավելվածը և ակտիվացնել ծառայությունը՝ զանգահարելով Բանկի Կոնտակտային կենտրոն, ուղարկելով հաղորդագրություն Բանկի պաշտոնական ֆեյսբուքի էջին կամ www.ameriabank.am կայքի Live Chat ծառայությանը:
 - 9.2. Ակտիվացման քայլերն իրականացնելուց հետո Ջանգիի միջոցով Ամերիաբանկ արդեն հնարավոր կլինի զանգահարել 4521 կարճ համարով, և հետևել ինքնապատասխանիչի քայլերին:
10. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով Հաճախորդի հանձնարարականները կատարելու ժամանակ լրացուցիչ հաստատում ստանալու նպատակով Բանկը իրավունք ունի հետադարձ կապ հաստատել Հաճախորդի հետ վերջինիս՝ Բանկում գրանցված հեռախոսահամարներից որևէ մեկով, կամ պահանջել Հաճախորդից զանգը կատարել վերջինիս Բանկում գրանցված հեռախոսահամարից:
11. Հաճախորդի՝ Բանկ ներկայացված համապատասխան գրավոր հայտի հիման վրա՝ Բանկը արգելափակում է հեռախոս-բանկ ծառայությունը, ինչպես նաև հանում է նախկինում կիրառված արգելափակումը:
12. Հաճախորդը պարտավոր է Հեռախոս-բանկ ծառայության միջոցով արտարժույթի փոխանակման գործարքի մեծության (ծավալի) և փոխարժեքի համաձայնեցման պահից նույն աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան գործարքը: Բանկն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել արտարժույթի փոխանակման գործարքը Հաճախորդի հետ նախապես համաձայնեցված պայմաններով կատարելուց, եթե Հաճախորդը չի կատարում գործարքը նույն աշխատանքային օրվա ընթացքում կամ խախտում է հեռախոս-բանկ

ծառայության միջոցով համաձայնեցված գործարքի պայմաններից (գործարքի մեծություն (ծավալ) և փոխարժեք) որևէ մեկը:

13. Բանկն իրավունք ունի գանձել տույժ Հաճախորդի հաշիվներից արտարժույթի փոխանակման գործարքի մեծության (ծավալի) 2 (երկու) տոկոսի չափով, եթե Հաճախորդը հրաժարվում է կատարել գործարքը նույն աշխատանքային օրվա ընթացքում կամ խախտում է Հեռախոս-Բանկ ծառայության միջոցով համաձայնեցված գործարքի պայմաններից (գործարքի մեծություն (ծավալ) և փոխարժեք) որևէ մեկը: Վճարման ենթակա գումարը գանձվում է Հաճախորդի այն հաշվից, որով ձևավորվել է գանձման ենթակա պարտավորության գումարը, իսկ եթե այդ հաշվին բավարար գումար առկա չէ, ապա գանձումը կատարվում է Հաճախորդի՝ Բանկում ունեցած այլ հաշիվներից՝ արտարժույթի փոխարկումը կատարելով տվյալ պահի դրությամբ Բանկի գործող փոխարժեքով:
14. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով Հաճախորդի կողմից Բանկին տրված հանձնարարականները Հաճախորդի կողմից ստորագրման ենթակա չեն: Հաճախորդի կողմից հանձնարարականի հաստատումը հեռախոս-բանկ ծառայության միջոցով համարվում է Հաճախորդի կողմից տրված պատշաճ հաստատում: Գործարքների կատարման հիմքերը արտացոլվում են Հաճախորդի հաշվի (հաշիվների) քաղվածքում:
15. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով կարող են իրականացնել հետևյալ գործարքները՝ ստորև նշված սահմանաչափերով.

N	Գործարքի տեսակ	մեկ գործարքի սահմանաչափ (ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթ)
1	Ձայնային տեղեկատվության ստացում առկա հաշիվների վերաբերյալ՝ հեռախոսակապի միջոցով	կիրառելի չէ
2	Արտարժույթի առուվաճառքի գործարք կատարելու նպատակով գործարքի մեծության (ծավալի) և փոխարժեքի սահմանում (համաձայնեցում) հեռախոսակապի միջոցով	կիրառելի չէ
3	Ներբանկային փոխանցումներ հաճախորդի հաշիվների միջև	մինչև 10,000,000
4	Ներբանկային փոխանցումներ այլ հաճախորդի հաշիվներին	մինչև 10,000,000
5	Արտարժույթի անկանխիկ փոխարկում	մինչև 10,000,000
6	ՀՀ այլ բանկեր կատարվող փոխանցումներ, եթե հաճախորդը նշված փոխանցումն արդեն իսկ կատարել է	մինչև 5,000,000
7	ՀՀ այլ բանկեր կատարվող փոխանցումներ, եթե հաճախորդն առաջին անգամ է կատարում նշված փոխանցումը	մինչև 3,000,000

8	Միջազգային փոխանցումներ	օրական 2,000,000	առավելագույնը
9	Կոմունալ վճարումներ	մինչև 1,000,000	

16. Հեռախոս-բանկ ծառայության միջոցով գործարքներ կարող են իրականացվել՝

- ✓ Երկուշաբթի-ուրբաթ՝ Երևանի ժամանակով 09:00-ից սկսած մինչև 20:00-ը ներառյալ
- ✓ Շաբաթ՝ Երևանի ժամանակով 10:00-ից սկսած մինչև 16:00-ը ներառյալ

Հեռախոս բանկ ծառայության միջոցով ներկայացվող վճարման հանձնարարականների արժույթ	Հեռախոս բանկ ծառայության միջոցով ներկայացվող վճարման հանձնարարականների կատարում ²			
	Ընդունում	Փոխանցում	Ընդունում	Փոխանցում
ՀՀ դրամ	Մինչև ժամը 14:00	Նույն բանկային օրը	Ժամը 14:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
ԱՄՆ դոլար	Մինչև ժամը 17:00	Նույն բանկային օրը	Ժամը 17:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը
Այլ արտարժույթ	Մինչև ժամը 16:00	Նույն բանկային օրը	Ժամը 16:00-ից հետո	Հաջորդ բանկային օրը

Ամերիաբանկ ՓԲԸ Հեռախոս-Բանկ ծառայության ամբողջական պայմաններին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումներով՝

- Ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ՝ <https://ameriabank.am/userfiles/file/Terms and Conditions PP arm 29 09 2017.pdf>
- «Ամերիաբանկ» ՓԲԸ ստանդարտ սակագներ ֆիզիկական անձ հաճախորդների համար՝ <https://ameriabank.am/userfiles/file/Individual Standard Tariffs.pdf>
- Ֆիզիկական անձանց ընթացիկ բանկային հաշվի բացման և սպասարկման ամփոփագիր՝ <https://ameriabank.am/userfiles/file/Account leaflet arm.pdf>

² Հեռախոս – բանկ ծառայության միջոցով ներկայացվող վճարման հանձնարարականները կատարվում են համաձայն Ֆիզիկական անձ հաճախորդների համար «Ամերիաբանկ» ՓԲԸ ստանդարտ սակագների: